ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.

№ 13 (1150)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շնորհավոր կոնդ, Ուսուցիչ

Սիրելի՛ ուսուցիչներ, կրթության նվիրյալներ,
Սիրելի՛ գործընկերներ,
Սիրելի՛ մանկավարժական ընտանիք:

Սրտանց շնորհավորում եմ Ուսուցչի օրվա առթիվ: Այս օրը բացառիկ հնարավորություն է երախտագիտությամբ արժևորելու ձեր անձնվեր առաքելությունը՝ սերունդներ կերտելու, գիտելիք տարածելու և արժեքներ սերմանելու գործը:

Դուք ոչ միայն գիտելիք եք փոխանցում, այլև ձևավորում եք անհատականություն, դաստիարակում քաղաքացի, ուղեկից և խորհրդատու դառնում յուրաքանչյուր աշակերտի ճանապարհին: Ձեր գործն անփոխարինելի է: Ձեր խոսքն ու վերաբերմունքը հաճախ դառնում են ապագայի ընտրության սկիզբ:

Մանկավարժական համալսարանը, որպես հայ ուսուցչի դարբնոց, բարձր է գնահատում ձեր նվիրվածությունն ու հավատարմությունը կրթական մեծ առաքելությանը: Մենք հպարտ ենք մեր շրջանավարտներով, որոնք իրենց գործունեությամբ պատվում են թե՛ համալսարանը, թե՛ ուսուցչի կոչումը:

Այս օրն առանձնահատուկ խորհուրդ ունի մեզ համար, քանզի ուսուցչի օրը տոն է ոչ միայն գործող ուսուցիչների, այլև նրանց համար, ովքեր պատրաստում են ուսուցիչ. տոնն է նաև մեր համալսարանի, մեր գործի ու մեր հավատքի:

Մենք Մանկավարժական համալսարանում ամեն օր կառուցում ենք վաղվա դպրոցը՝ նախևառաջ ձևավորելով ուսուցչի կերպարը: Եվ որքան մեծ ու պատասխանատու է այդ առաքելությունը, այնքան ավելի մեծ նվիրում, ջերմություն ու սեր է պահանջվում: Ու հենց այդ սերն է, որ ապրում է մեր ուսանողի մեջ՝ որպես ապագա ուսուցիչ, մեր դասախոսի մեջ՝ որպես օրինակ ու մղիչ ուժ, մեր համալսարանի մեջ՝ որպես հիմնարար արժեք:

Այս տոնը ևս մեկ առիթ է արտահայտելու խորին շնորհակալություն մեր երկրի բոլոր ուսուցիչներին, ինչպես նաև մեր համալսարանի ողջ անձնակազմին, որոնք մասնակցում են ուսուցիչ կերտելու այս վեհ գործին:

Թող ձեր սրտերում երբեք չսպառվի լույսը, ձեր աչքերում չմարի հավատը, ձեր քայլերում՝ չթուլանա նպատակի ուժը:

Շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի օրվա առթիվ՝ մաղթելով ստեղծագործ ուժ, ջերմեռանդություն և անսպառ ներշնչանք:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Ուսուցչի մասնագիտությունը միայն գործ չէ, այն կոչում է, ծառայություն է մարդուն ու հայրենիքին»

Մանկավարժական համալսարանի առաջին կուրս ընդունված ուսանողների հերթական սերունդը մասնակցեց ուսուցչի առաքելությանը նվիրվելու երդման ամենամյա արարողությանը:

Միջոցառումը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության հիմնի հնչյունների ներքո, որից հետո առաջին կուրսեցիներին ողջունեց Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Արուս Այվազյանը:

«Օրը խորհրդանշական է և մեկ անգամ ևս փաստում է, որ կրթությունն է մեր ամենամեծ մասնագիտական, անձնական և հասարակական հաջողությունների հենասյունը: Այս գիտակցումով էլ փաստում եմ, որ իմ հաջողությունները կապված են Մանկավարժական համալսարանի հետ, որը տալիս է որակյալ կրթություն, ձևավորում ամուր արժեքներ, որոնք ոգեշնչում են ուսանողին ոչ միայն ուսման մեջ, այլև կյանքում նպատակասլաց ու համառ լինելու և կրթության հզոր ուժը մարդկանց մեջ սերմանելու ճանապարհին»,-ասաց բուհում բազմաթիվ հաջողություններ գրանցած ուսանողուհին:

Նա իր կրտսեր ընկերներին հորդորեց՝ լինել հետևողական, աշխատասեր, սիրել ընտրած մասնագիտությունը և դառնալ լուսավոր ապագային միտված քայլեր անող մասնագետներ:

«Ընտրելով Մանկավարժական համալսարանը՝ դուք ընտրել եք ոչ թե պարզապես մասնագիտություն, այլ առաքելություն,-ասաց Արուս Այվազյանը՝ հավելելով՝ ուսուցչի մասնագիտությունը միայն գործ չէ, այն կոչում է, ծառայություն է մարդուն ու հայրենիքին: Ուսուցիչը ձևավորում է սերունդների մտածողությունը, կերտում է ապագան, փոխանցում արժեքներ և ոգեշնչում դեպի բարին:-Մանկավարժականում անցկացրած ձեր ուսումնառության տարիները լինելու են որոնումների, բացահայտումների և մեծ ձեռքբերումների տարիներ»:

Առաջին կուրսեցիներին ողջունեցին ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը, ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գոհար Հովյանը:

«Այն ուղին, որ ընտրել եք, ուղղակի մասնագիտություն ստանալու գործընթաց չի: Դա իսկապես մի ողջ առաքելություն է»,-ասաց ԿԳՄՍ նախարարը:

Նա վստահեցրեց, որ Մանկավարժական համալսարանում ուսանելու տարիներին ուսանողների սովորածը օգնելու է իրենց, որ հետո սովորեցնեն բազմաթիվ երեխաների, որպեսզի մեր երկրի զարգացումը կայանա նաև իրենց ջանքի շնորհիվ:

Նախարարը փաստեց՝ ուսուցչի աշխատանքը ամենաբարդ ու ամենածանր, բայց նաև ամենաշնորհակալ աշխատանքներից է, ապա հավելեց՝ այս աշխատանքն ընտրելը վկայում է նաև ձեր մարդկային որակների մասին:

Նա շնորհակալություն հայտնեց ապագա ուսուցիչներին՝ մասնագիտության ճիշտ ընտրության համար, և մաղթեց, որ նրանք վաղը «լինեն ամենալավ ուսուցիչները մեր ամենալավ դպրոցներում մեր ամենալավ երեխաների համար»:

Նախարարը կարևորեց Ուսուցչի միջազգային օրվա շրջանակներում անցկացվող առաջին կուրսեցիների երդման արարողությունը՝ որպես մեծ համայնքի մի մաս, նաև հորդորեց ուսանողներին՝ չհուսահատվել ու չընկճվել, որովհետև «այն բոլոր դժվարությունները, որ կհանդիպեն ուսումնառության ընթացքում, նաև սովորելու ճանապարհ են»:

Նախարարը բոլորին մաղթեց լավագույն ուսանողական տարիներ՝ հետագայում՝ լավագույն աշխատանքային տարիներ ունենալու ակնկալիքով:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց համալսարանի կյանքում շատ սպասված օրը՝ առաջին կուրսեցիների երդման արարողությունը, որի բովանդակությունն արտացոլում է Մանկավարժական համալսարանի գործունեության առօրյա, որի ներքո ձևավորվում են ուսանողների գիտելիքներն ու սոցիալ-մշակութային, հաղորդակցական հմտությունները 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող պահանջների համատեքստում:

Ռեկտորը վստահեցրեց առաջին կուրսեցիներին՝ «ձեր հուզական հիշողության մակարդակում ամրապնդվելու են այսօրվա պատգամները, որոնք շարունակվելու են լսարանային բաց դասերի ու երկխոսության պայմաններում»:

Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց նաև ծնողներին և մաղթեց, որ նրանց երեխաները համալսարանում մարմնավորված տեսնեն բոլոր երազանքները՝ ուսուցչի մոդելի տեսլականով պայմանավորված:

«Կարծում եմ սա ամենակարևոր օրն է մանկավարժի մասնագիտությանը հավակնող յուրաքանչյուր ուսանողի համար,-ասաց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանը:-Երդումը նաև մեծ խոստում է ու պատգամ՝ ապագայում բարձր պահելու մանկավարժի մասնագիտության պատիվը և լինելու հիանալի աբովյանական մասնագիտական կրթություն ստանալու և ուսումնառության գործընթացում»:

Դեկանը համոզված է՝ տարիների հեռվից այս օրը երկար կմնա ուսանողնողների հիշողության մեջ, որը կհիշեն ողջ ուսումնառության ընթացքում հավատարիմ մնալու մանկավարժի կոչմանը:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Հովհաննես Խաչիբաբյանն ընթերցեց առաջին կուրսեցիների երդման տեքստը, որին ձայնակցեց 700 առաջին կուրսեցի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում բուհի օրվան նվիրված հանդիսավոր արարողության ընթացքում ԵՊՄԵ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է «ԵՌԵ պատվավոր պրոֆեսոր»-ի կոչում, որը շնորհել է բուհի ռեկտոր Էդվարդ Սանդոյանը:

ԵՊՄԵ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կոչմանն արժանացել է Հայ-ռուսական համալսարանի հետ երկարատև և արդյունավետ գիտական և կրթական համագործակցության, հոգեբանության և մանկավարժության ոլորտում նշանակալի նվաճումների, Հայաստանի կրթության և գիտության համակարգի զարգացման գործում ունեցած ներդրման համար:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 34-ՐԴ ՏԱՐԻ

«Անկախությունը, անկախ Հայրենիքն իրավունք լինելուց առաջ պարտականություն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյության իրավունքը:

Ազգերի հանճարը ստեղծագործ, իսկ նրա արտահայտությունը հորդաբուխ է լինում միայն բացարձակ անկախության մթնոլորտում: Ահա թե ինչու մարդկությանն ավելի օգտակար լինելու համար ժողովուրդները պիտի լինեն ինքնիշխանորեն ազատ և անկախ»:

Գարեգին Նժդեհ

«Կը խորհինք թե Սեպտեմբերի 21-ի այո-ն ոչ թէ լրումն է մեր անկախութեան իտեալի, այլ շարունակումն է անկախութեան առաւել վճռական ու գործարար գործընթացի, ապահովումովը մեր հայրենիքի քաղաքական անվտանգութեան և տնտեսական զարգացման:

Հայոց աշխարհի հորիզոնի վրայ, ահա բարձրանում է անկախութեան աստղը:

Օրհնութիւն և փառք ճառագայթող այդ աստղին ու յաւետ ազատ՝ արմենական մեր ազգին»:

Վազգեն Առաջին

Ավարտական աշխատանքի նոր պահանջներին միտված հանդիպումները շարունակվում են

Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 17-ից մեկնարկել և շարունակաբար կազմակերպվում են հանդիպումներ համալսարանի ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Հանդիպման նպատակը բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կառուցվածքային տարրերի և բովանդակային նոր պահանջների մասին իրազեկելն է և համատեղ քննարկումը:

Հանդիպումները վարում են ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը և ռեկտորի խորհրդական Հակոբ Թադևոսյանը: Նրանք հանգամանորեն ներկայացնում են բակալավրի ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի փոփոխությունները, փաստելով, որ դրանք համապատասխանեցվել են միջազգային ընդունելի չափորոշիչներին:

Նոր փաստաթուղթը, որը նկատելիորեն ավելի դյուրին կդարձնի ուսանողների աշխատանքը, հանգամանորեն ներկայացնում է ռեկտորի խորհրդական Հակոբ Թադևոսյանը: ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը մեկնաբանում է և պատասխանում դասախոսների հարցադրումներին:

Բովանդակային կառուցվածքի փոփոխությունների հետ մեկտեղ ներկայացվում են նաև ծավալային փոփոխությունները: Բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողն այսուհետև իր ուսումնասիրության մեջ պետք է անդրադառնա հիմնախնդրի սահմանմանն ու արդիականությանը, հետազոտության նպատակին, հետազոտական հարցին, հետազոտության կարևորությանն ու սահմանափակումներին:

Շատ կարևոր է գիտական աղբյուրների վերլուծությունը: Ինչպես ընդգծում է պրոռեկտորը՝ ուսանողին պետք է սովորեցնել վերլուծություն անել, հետազոտական հարցերը ձևակերպել՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից, ունենալ հստակ հետազոտական հարց, որը պետք է հենվի նպատակի վրա և պայմանավորված լինի արդիականությամբ:

Աշխատանքի երկրորդ գլխում պետք է ներկայացվի աշխատանքի մեթոդաբանությունը՝ հետազոտության մեթոդների հստակ ձևակերպմամբ, իսկ երրորդ գլխում պետք է անդրադառնալ հետազոտության արդյունքներին, որից հետո արդեն՝ ամփոփում, եզրակացություններ, քննարկում և առաջարկություններ:

Մագիստրոսական թեզի պահանջները բարդ են բովանդակային առումով, ծավալներն ավելի մեծ, անհրաժեշտ է գրականության քննադատական վերլուծություն ներկայացնել, որի հետազոտական աշխատանքի ընթացքում կարող են անգամ բախվել տարբեր օրենքների:

Պրոռեկտորն անդրադառնում է մի շարք խնդիրների՝ կապված հետազոտական աշխատանքների հետ: Հինգ տարվա ուսումնասիրություններից պարզվել է, որ բուհի ուսանողների ավարտական աշխատանքները չեն համապատասխանում ներկա պահանջներին և փոփոխությունների լուրջ կարիք ունեն: Մշակված նոր փաստաթուղթը միտված է այդ փոփոխությունների ներառմանը, ավելի ճիշտ՝ պետք է ամբողջությամբ վերանայել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի հանդեպ գոյություն ունեցող հին մոտեցումները: Նոր պահանջները արդյունավետ աշխատանքի հնարավորություն կընձեռեն, կուղղորդեն ճիշտ ներկայացնել հետազոտական աշխատանքը՝ ելնելով նրան ներկայացվող պահանջներից:

Մենք պատասխանատու ենք սերունդների ապագայի համար

Մեր հարցազրույցը Էջմիածնի հանրակրթական դպրոցի տնօրեն Սուսաննա Վարդանյանի հետ

-Տիկին Վարդանյան, հե՞շտ է արդյոք մեր օրերում լինել դպրոցի տնօրեն:

-Կրթությանը ներկայացվող հասարակական պահանջը ձևավորվում է քաղաքական և տնտեսական համընդհանուր պահանջներին համապատասխան, հետևաբար ցանկացած ժամանակաշրջանում էլ դպրոցի տնօրենը պետք է կարողանա ապահովել իրեն վստահված շահառուների կարիքների բավարարումը: Իսկ դա հեշտ լինել չի կարող· բազմաշերտ համայնք, ստեղծագործ և հետևողական աշխատանք, նորարարությունների ու փոփոխվող գործոնների հետ համահունչ քայլք, ժամանակի զգացողություն, ապագայի տեսլական (երկար կարելի է թվարկել). այս ամենը տնօրենի ամենօրյա գործառույթների մի մասն է կազմում: Դժվարություններից է նաև պատասխանատվության մեծ չափաբաժինը անչափահասների հետ տարվող աշխատանքում: Մենք պատասխանատու ենք նաև պետության և հասարակության, ինչպես նաև սերունդների ապագայի համար:

- Դպրոցը ղեկավարելու գործում հատկապես Ձեր ո՞ր հատկանիշներն եք կարևորում և ինչո՞ւ:

-Ազդեցության ունակությունը, համայնքին վստահելու, միշտ լսելու և ընկալելու պատրաստակամությունը: Այս հատկանիշներն ինձ օգնում են լավ հարաբերություններ հաստատել սովորողների, աշխատակիցների, ծնողների հետ, և շահում է գործը:

-Ձեր դպրոցը. ինչո՞վ է այն տարբերվում մյուս դպրոցներից կամ նմանվում:

-Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Էջմնեկեան հանրակրթական դպրոցի ողջ համայնքն իր առավոտը սկսում է Տերունական աղոթքով. ուսուցիչ, սովորող կողք կողքի ականջալուր են դառնում մեկմեկու՝ մինչև դպրոց մտնելը: Դասարաններում սովորողների թիվը 16-ը չի գերազանցում. ուսուցիչը կարողանում է հետևել յուրաքանչյուրի առաջընթացին կամ արձանագրել բացթողումները: Լավ սովորելու բոլոր պայմանները (և՛ ֆիզիկական, և՛ բովանդակային) առկա են դպրոցում: Գործում են առարկայական անվճար խմբակներ, որոնք նպաստում են սովորողների գիտելիքների ամրապնդմանը: Մասնագիտական կողմնորոշման ձևավորման համար դպրոցական արձակուրդներն անցկացնում են տարբեր կազմակերպություններում՝ Իզմիրլյան բժշկական կենտրոնում, Բարձունք-5165 բարեգործական ատամնաբուժարանում, Կոնվերս բանկում, Տերասա Վայն գինու գործարանում: Դպրոցն ավարտող բոլոր շրջանավարտներն, առանց բացառության, ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Սովորողների դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներից առանձնացնում ենք բարեգործական և կամավորական աշխատանքները: Որպես մասնավոր դպրոց՝ առաջնորդվում ենք մեր ներքին կանոնակարգերով, որոնք որոշակի ազատություններ են տալիս դպրոցին: Դպրոցի կողքին են միշտ

և՛ Բարերարը, և՛ Հիմնադիրը. նրանց ամենօրյա աջակցությունն ավելի է զորացնում դպրոցը:

-Բնութագրեք մերօրյա դպրոցը. ժամանակակից պահանջներին համահունչ փոփոխություններ՞ը, թե՞ ժամանակակից ուսուցչին ներկայացվող անսահման պահանջներ, երբ վերջիններս չեն տեղավորվում ժամանակի մեջ, էլ չասենք վարձատրության մասին:

- Մերօրյա դպրոց՝ կիսաավանդական, ուսուցման-ուսումնառության հիմնախնդիրներով շաղախված, տարիներ շարունակ բարեփոխումներով լեցուն, նորարարություններին կրնկակոխ հետևող: Այո, փոփոխությունները շատ են, նաև շատ արագ. հասարակության զարգացումն անընդհատ գործընթաց է, հետևաբար անընդհատ պիտի շարունակվեն կրթական բարեփոխումները: Հասկանալի է՝ ցանկալի է ունենալ լավ կրթական համակարգ, սակայն օրենքներից, չափորոշիչներից, կանոնակարգերից զատ պետք է ուշադրությունը կենտրոնացնել սովորողների սովորելու ցանկության վրա: Նոր սերունդն այսօր շատ արագ է փորձում մտնել աշխատաշուկա և գտնում է ավելի կարճ ճանապարհներ իր ուզածին հասնելու համար: Ավագ դպրոցների շատուշատ սովորողներ պարզապես ֆիզիկական ներկայություն են ապահովում և նրանց նոր չափորոշիչ կամ զանազան փոփոխվող մեթոդներ չեն հետաքրքրում: Իսկ ուսուցիչը, այո, շատ է ծանրաբեռնված. տրված թվացյալ ազատությունն իրագործել բազմաշերտ դասարաններում, դասապրոցեսի ընթացքում հետևողական լինել 25-30 սովորողների վարքին, ուսումնառությանը, բացահայտել նրանց խնդիրները, զարգացնել սեփական աշխարհը ձևավորելու ու հասկանալու կարողությունները, հասնել վերջնարդյունքի, դասերից հետո զբաղվել ինքնակրթությամբ կամ մասնակցել վերապատրաստումների՝ առկա կամ առցանց... օրն ավարտվում է, սակայն դեռ անելիքները չեն պակասում: Վարձատրության մասն էլ է ուսուցչին նեղացնում: Կամավոր ատեստավորումը որոշ ուսուցիչների համար դարձավ սոցիալական վիճակի բարելավման միջոց, սակայն որևէ հաջողություն չգրանցվեց կրթության որակի բարելավման ճանապարհին: Բանիմաց և իրենց գործը լավ կատարող շատ ուսուցիչներ մնացին ստվերում՝ կամավորին չմասնակցելու հիմնավոր պատճառներ ունենալով: Մի տեսակ անհավասար դաշտ է ստեղծվել: Լավ գիտելիքով զինված ուսուցիչն այսօր դպրոցում հաճախ բախվում է դասարանավարության դժվարությունների հետ և, բնականաբար, չի հաջողում գիտելիքը տեղ հասցնել: Անհրաժեշտ է նաև մանկավարժության տարրերը ևս ներառել՝ ուսուցչի ամբողջական պատկերը ստանալու համար:

Կարծում եմ՝ ուսուցչի աշխատավարձը պետք է ուղիղ համեմատական լինի իր կատարած աշխատանքի որակի հետ. կան չափելի գործիքներ:

-Անկեղծ լինենք. այսօր հասարակություն-ծնող-դպրոց կապում ինչ-որ բան կորցրել ենք, որի արդյունքում սովորողները դարձել են անկառավարելի: Ինչպե՞ս հաղթահարել դպրոցականների ագրեսիվության դրսևորումները: Ո՞րն է ելքը:

-Սոցիալական կամ սոցիալ-տնտեսական գործոններն այսօր բացասաբար են անդրադառնում հասարակության որոշ շերտերի վրա: Նյութապես ապահով և ոչ ապահով մարդիկ կարող են դրսևորել նույնատիպ ոչ պատշաճ վարքագիծ, օրինակ կամ հեղինակություն դառնալ իրենց զավակների համար: Իրավունքների և պարտականությունների սահմանագիծը չճանաչող անձը՝ ծնող թե սովորող, գլխացավանք է դառնում ուսումնական հաստատության համար: Դեռահասների անկառավարելի վարքագծի դրսևորումները բազմազան են. կան արտաքին և ներքին դրդապատճառներ: Նման երևույթները հաղթահարելու համար պետք է առաջինը փորձել վստահություն շահել զրույցների միջոցով, բացահայտել ագրեսիվության պատճառները, փորձել տալ լուծումներ, ինչպես նաև ծանոթացնել վարչական իրավախախտումների մասին օրենսդրությանը: Հաճախ է խոսվում սովորողների նկատմամբ կատարված բռնությունների մասին, մինչդեռ քիչ չեն նաև ուսուցիչների հանդեպ կատարվածները:

-Ի՞նչը կփոխեիք այսօրվա դպրոցում:

-Լավ կրթություն տալու համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ, մեծ ֆինանսավորում, որոնք կնպաստեն գիտակ և բանիմաց մարդկանց ներառել կրթության գործընթացում: Իսկ ես կուժեղացնեի հիմնական դպրոցները բոլոր առումներով, պարտադիր ուսուցումը կթողնեի մինչև 9-րդ դասարան, կվերանայեի կրթության բովանդակությունը, ծավալները, սովորողների ծանրաբեռնվածությունը, գնահատման սանդղակը:

-Ի՞նչ մարտահրավերների եք բախվում Ձեր գործունեության ընթացքում:

-Ելնելով մեր դպրոցի կազմակերպաիրավական տեսակից՝ ես հեշտ եմ կարողանում շրջանցել շատ դժվարություններ. դպրոցն ունի հոգաբարձուների խորհուրդ, որի անդամները կրթության բնագավառում ունեն մեծ փորձառություն, ձեռքբերումներ, և իրենց աջակցությամբ առաջ գնալը դառնում է դյուրին:

-Շատերն այն կարծիքին են, թե խորհրդային տարիների դպրոցական համակարգն ավելի ճկուն էր: Դո՞ւք էլ եք այդպես մտածում:

-Բնավ: Խորհրդային տարիների դպրոցական դաս-դասարանային համակարգը հարմարեցված էր այդ տարիների գաղափարախոսությանը. հիմնականում ուսուցիչներն աշակերտների ստեղծագործ միտքը զարգացնելու փոխարեն հաղորդում էին զուտ իրենց գաղափարները. այլակարծությունը խիստ արգելված էր: Իհարկե, անուրանալի են այդ տարիների վաստակաշատ ուսուցիչների ներդրումները, դպրոցական կարգապահությունը, ծնողների հետևողականությունն ու դպրոցի և ուսուցչի նկատմամբ վերաբերմունքը, որը, ցավոք, այսօր շատ է պակասել: Այսօրվա դպրոցին մեծ առավելություններ են տրվել ինքնուրույն կազմակերպելու կրթության գործընթացը՝ ներգրավելով համայնքի ներուժը: Այս գործընթացում կարևորվում է նաև սովորողների մասնակցությունը, որը և շատ է փոխել նորօրյա շրջանավարտի կերպարը. ավելի համարձակ են, ինքնուրույն, յուրօրինակ մտածելակերպով, լայնախոհ. հնարավորություններ ունեն սեփական տեսակետներն առաջ տանելու:

-Ի՞նչն է ղեկավարին ավելի հմուտ և ուժեղ դարձնում՝ ղեկավարման փո՞րձը, մարդկային տեսակը, որակական հատկանիշնե՞րը, թե՞ այլ գործոններ...

-Թվարկվածները կարևոր են առաջանցիկ ղեկավար լինելու համար, բայց կարծում եմ՝ արդյունավետ ղեկավարելու համար անհրաժեշտ է օժտված լինել ավելի լավ բան անելու, լավը տեսնելու և բարձրաձայնելու կարողությամբ: Պաշտոնը չէ, որ լավն է դարձնում ղեկավարարին, այլ՝ հակառակը:

-Ի՞նչ կմաղթեք ապագա մանկավարժներին:

-Սիրել աշխատանքը և սովորողներին: Կարևոր է ընկալել դասավանդման փիլիսոփայությունը, և դրա ըմբռնումից հետո միայն նրանք կկարողանան ազատորեն զբաղվել մասնագիտական ստեղծագործ և կառուցողական աշխատանքով:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆ Է

Ուսուցչի մասնագիտությունն ինչ համար կենսակերպ է

Ես Մելինե Հրաչիկի Միքայելյանն եմ, ծնվել եմ 1970 թվականին Երևանում: Սովորել և ավարտել եմ Կամոյի անվան N 76 դպրոցը:

1988-ին ընդունվել և 1992-ին ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետը:

2006–2010 թթ. կրթությունս շարունակել եմ նույն համալսարանի Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում:

1994–2015 թթ. աշխատել եմ N 29 դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ:

2015–ից առ այսօր աշխատում եմ համալսարանական N 57 հիմնական դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ:

31 տարի է՝ աշխատում եմ դպրոցում և այդ տարիների ընթացքում հրապարակել եմ գիտական տարբեր հոդվածներ:

Վաղ հասակից սիրել եմ ուսուցչի աշխատանքը և իմ միակ երազանքը եղել է դառնալ ուսուցիչ: Լինել ուսուցիչ՝ ոչ միշտ է հեշտ, այն մեծ պատասխանատվություն է, ամենօրյա աշխատանք: Պետք է լինել համբերատար, հետաքրքիր աշակերտների համար և պատրաստ լինել օգնելու երեխաներին՝ հաղթահարելու ուսումնառության ընթացքում հանդիպող դժվարությունները:

Աշխատել եմ և՛ ավագ, և՛ հիմնական դպրոցներում: Ինձ առավել հետաքրքիր է աշխատել հիմնական դպրոցի՝ հատկապես տարրական դասարանների աշակերտների հետ, քանի որ այդ տարիները նրանց դպրոցական կյանքի կարևոր շրջանն են: Ուսուցիչը նրանց համար բացում է հետաքրքիր և կախարդական աշխարհի դռները, և այդտեղ շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը. չէ՞ որ յուրաքանչյուր երեխա զգում է անկեղծությունը, սերն իր նկատմամբ:

Ուսուցչի մասնագիտությունն ինձ համար կենսակերպ է: Իմ ամեն օրն սկսվում է սովորողների մեջ առարկայի հանդեպ սեր սերմանելուց և ավարտվում նրանց մեջ մարդկային որակներ հայտնաբերելով: Երկուսը փոխլրացնում են միմյանց, օգնում ճիշտ հասկանալ աշակերտներին, գնահատել ամեն պահը, վստահել ու վստահություն ձեռք բերել, անաչառ, ազնիվ և ուշադիր վերաբերմունք դրսևորել նրանցից յուրաքանչյուրի հանդեպ: Սա է մերօրյա ուսուցչի առաքելությունը, որ ամենօրյա պատասխանատվություն է ու տքնաջան աշխատանք: Պետք չէ վախենալ դժվարություններից, երբ սիրում ես երեխաներին ու աշխատանքդ:

Ուսուցչի մասնագիտությունն ինձ համար կենսակերպ է. ես հաճույքով եմ ամեն օր դպրոցի շեմից ներս մտնում և իմ ամեն օրը նվիրում ուսուցչի վեհ գործին:

Մելինե ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
N 57 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ

Ամփոփվեց քառամյա ծրագիրը

Մանկավարժական համալսարանում ամփոփվեց ԿԳՄՍ նախարարության և Բրիտանական խորհրդի համագործակցությամբ իրականացվող «Ուսուցիչների առցանց համայնք» (Online Teacher Community) քառամյա ծրագիրը: Այն ուղղված էր անգլերեն դասավանդող ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացմանը: Ծրագրին անցկացվել է առցանց ձևաչափով. մասնակցել է անգլերենի ավելի քան 1500 ուսուցիչ և 200-ից ավելի ուսանող:

Ամփոփիչ միջոցառմանը ներկա էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, Բրիտանական խորհրդի հայկական գրասենյակի տնօրեն Ադդե Հովասափյանը, ոլորտի ներկայացուցիչներ, մասնագետներ, ուսանողներ:

«Ուսուցչի մասնագիտական զարգացումն այսօրվա հանրակրթական դպրոցի համար որոշիչ ազդեցություն ունի: Մի կողմից հանրակրթության նոր չափորոշչի ներդրումը՝ բովանդակային և մեթոդական փոփոխությամբ, մյուս կողմից՝ գիտության և տեխնոլոգիաների արագ տեմպով զարգացումն ուղիղ անդրադարձ են ունենում դպրոցի վրա՝ ուսուցչի առաջ խնդիր դնելով համապատասխանել ժամանակակից կրթական համակարգի պահանջներին: Այս ուղղությամբ բազմաթիվ ծրագրեր են իրականացվում թե՛ պետության կողմից, թե՛ գործընկերների հետ համագործակցությամբ»,- նշեց նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

Նա ծրագիրը բացառիկ հաջողվածներից համարեց նաև մասնակցայնության տեսանկյունից՝ միջազգային չափանիշների համատեքստում ինչպես արդեն գործող մասնագետների, այնպես էլ որպես մասնագետ նոր կայացողների մասնագիտական ներուժի խթանման առումով:

Ծրագիրն աննախադեպ էր նախնառաջ տևողության առումով. Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներն ակտիվորեն մասնակցել են ծրագրերի մշակմանը. դրանք արդյունավետորեն կիրառվել են վերապատրաստումների, փորձի փոխանակման, ինչպես նաև կրթական ծրագրերի նորացման և լավարկման գործընթացում:

ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը կարևորեց և մեծ պատիվ համարեց Մանկավարժականի և Բրիտանական խորհրդի ակտիվ համագործակցությունն ու բուհի՝ ծրագրի մաս կազմելը:

Նա ընդգծեց՝ ծրագիրն ուսանողների համար մեկ այլ հարթակում ինքնադրսևորվելու, կրթական ճանապարհին նոր փորձառություն ձեռք բերելու և կամավորական աշխատանքով զբաղվելու կարևոր հնարավորություն էր:

Բրիտանական խորհրդի հայկական գրասենյակի տնօրեն Ադդե Հովասափյանը Մանկավարժականի հետ սերտ համագործակցության համար ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանին հանձնեց հուշանվեր, իսկ ծրագրի մասնակիցներին տրվեցին հավաստագրեր:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

«Ոսկե դափնի» մրցանակ Աշոտ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

-«Ոսկե դափնի» մրցանակը Ձեզ համար անակնկա՞լ էր, ի՞նչ զգացողություններ առաջացրեց:

-Յուրաքանչյուր մարդ իրեն հարգված է զգում, երբ գնահատում են իր աշխատանքը: Ես ուրախ եմ, որ դրսում գտնվելով, հայրենիքում գնահատում են իմ արվեստը: Ես կարողանում եմ իմ համեստ գործունեությունը շարունակել որպես նկարիչ, նաև պատմաբան: Չեխիայի արվեստի վաստակավոր գործիչ եմ, միաժամանակ Մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պատվավոր անդամ: Երկար տարիներ ապրում եմ Չեխիայում, նկարելուց զատ, Չեխիայի խորհրդարանի և ամենամեծ տպաքանակով տպագրվող «Դեննիկ» թերթի արտահաստիքային քաղաքական մեկնաբան եմ: Պետք է նշեմ, որ տարին երկու անգամ՝ ապրիլի 24-ի և այլ կարևոր իրադարձությունների առթիվ, թերթում հանդես եմ գալիս հրապարակումներով:

-Ձեզ տրվել է մրցանակ շատ տպավորիչ անվանակարգում՝«Արվեստի, գիտության և լրագրության ժամանակակից հայ մտավորականության հավաքական կերպար»...

-Ներքուստ շոյված եմ, հոգուս մեջ ուրախություն է, որովհետև յուրաքանչյուրին մրցանակ է տրվում իր ոլորտին նպաստ բերելու համար, իսկ իմ ստացած մրցանակը հավաքական ձևակերպման անվանակարգում է. ես անչափ ուրախ եմ նման անվանակարգով մրցանակ ստանալու համար:

-Ի՞նչ եք կարծում, ավելի լավ է մրցանակներ ստանալ հայրենիքո՞ւմ, թե՞ հայրենիքից դուրս:

-Երկուսն էլ հաճելի է, երկուսն էլ գնահատված լինելու հաճելի զգացողություններ են պարգևում: Հայրենիքից դուրս մրցանակ ստանալն էլ է հաճելի: Ինքս Չեխիայի նկարիչների միության անդամ եմ: Մորավիայի շրջանում այդ միության անդամ մոտ 150 նկարիչ կա, որտեղ միակ օտարազգին ես եմ:

-Իսկ տեղի հայերի հետ կապեր ունե՞ք:

-Մորավիայի կենտրոնը Բռնոն է, Բռնոյում հայեր կան, բայց շատ չեն, հայերի մեծ մասը բնակվում է Պրահայում: Տարվա մեջ 2-3 անգամ դեսպանատնից հրավեր եմ ստանում և մասնակցում եմ միջոցառումների: Կապի մեջ եմ «Օրեր» ամսագրի խմբագիր Հակոբ Ասատրյանի, Հայր Բարսեղի հետ: 300 կմ հեռավորության վրա եմ, և ժամանակս չի ներում ավելի շուտ-շուտ հանդիպել:

-Ի՞նչ հաճախականությամբ եք ցուցահանդեսներ կազմակերպում:

-Տարին մեկ անգամ: Ցուցահանդեսներ շատ չեմ կազմակերպում: Ստեղծագործություններս հիմնականում վաճառում եմ ցուցասրահներում:

- Չեխ շրջանակների հետ Ձեր շփումներն ավելի՞ շատ են: Ի՞նչ դիրքորոշում ունեն չեխերը հայ ժողովրդի հանդեպ:

-Չեխերը օտարազգիների հետ չեն սիրում շփվել: Անկեղծ լինեմ՝ հայ ժողովուրդը միշտ էլ ուշադրությունից դուրս է մնացել: Աշխարհի բոլոր հարցերը լուծվում են տնտեսական, քաղաքական, ռազմական շահերից ելնելով: Հայաստանը ոչ մի արժեք չի ներկայացնում այդ խոշոր երկրների համար: Ադրբեջանը և Թուրքիան ավելի մեծ դեր ունեն, քան Հայաստանը: Հայաստանին պահում են միայն

որպես գործիք՝ հակառուսական տրամադրությունների համար: Եվ դա շատ վատ է:

- Իսկ երբ Ձեզ որևէ ամբիոն է տրամադրվում, ինչպե՞ս եք այն ծառայեցնում հայանպաստ գործունեությանը:

-Չեխիայում ելույթներ եմ ունենում որպես պատմաբան: Ավելի շատ քաղաքական թեմաներով եմ ելույթներ ունենում, քան թե զբաղվում եմ նկարչությամբ:

Մի անգամ Չեխիայի Բռնո քաղաքի քաղաքապետարանում մեծ բանավեճի մասնակցեցի՝ նվիրված ռուս-ուկրաինական հակամարտությանը: Ես ասացի նրչանց, որ «ուկրաինա» բառը «կրայ»՝ ծայրամաս է նշանակում Ռուսաստանի. ուկրաինացիները, բելառուսները և ռուսները նույն ազգն են, այնպես, ինչպես մեզ մոտ արցախցիները և հայաստանցիները նույն հայ ազգն են: Ես բարձրաձայնեցի, որ Սովետական Միության փլուզումից հետո Եվրոպան ստորագրել է, որ չի խառնվի Ռուսաստանի ներքին գործերին, բայց խաբեց: Ռուսաստանը նպատակ չունի այլ երկրներից զավթել, բացի միավորվել նույն ազգի հետ: Աշխարհի «ամենաբանդիտ» գաղութարարները եղել են եվրոպացիները· հազարամյակներ շարունակ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի 80-85 տոկոսն ոչնչացրել են՝ հարավային, հյուսիսային հնդիկների 90-95 տոկոսին, նաև Աֆրիկան: Այդպիսի բանդիտիզմ աշխարհը չի ունեցել: Ես կարծում եմ՝ Աստված ռուսներին ստեղծել է, որ բանդիտիզմի դեմն առնի:

-Մեր օրերում հայրենասիրություն բառը մի տեսակ արժեզրկվել է: Ձեր կարծիքով ո՞վ է մեր օրերի հայը:

-Ամեն ինչ կախված է ընտանիքի հորից: Եթե ընտանիքում ինչ-որ բան այն չէ, տուժում են զավակները: Այսօր մեր ժողովուրդը կոտրված է և ընկճված...

-Ձեր նկարչական ոճի մեջ փոփոխությո՞ւն եք մտցրել:

-Ես մեր համալսարանում էլ եմ նկարչության դասընթացների մասնակցել, Մոսկվայում էլ: Երբ նկարիչը այն, ինչ տեսնում և նկարում է՝ իր ձեռքն է աշխատում: Դարձյալ հարգում եմ: Չեմ հիշում՝ ով էր մեր դասախոսներից ասում՝ առավելությունը տալիս է նրան, ով իր միջից է տեսնում, վերցնում ու նկարում... Այդ ժամանակ գլուխն է աշխատում... Իմ նկարածները բոլորն իմ մտահղացումներն են: Կարելի է ասել՝ երբ նկարին անընդհատ նույն թեմայով է ստեղծագործում, դառնում է անհետաքրքիր: Ես աշխատել եմ տարբեր թեմաներով, սակայն հիմնականում ծաղիկներ եմ նկարում, նաև քաղաքային տեսարաններ, դիմանկարներ, Պրահայի տեսարաններ:

- Որքան տեղյակ եմ, նկարելու նոր, անհավանական տեխնիկա եք օգտագործում...

-Ինձ Մոսկվայում սովորեցրել են մաստիխինով (երկաթյա լապատկաներով) նկարել, բայց ես օգտագործում եմ ներկարարի (մալյարի) գործիքներ մինչև 40 սանտիմետրանոց: Այն ժամանակ Ղարաբաղում և նաև հիմա Պրահայում նկարիչներն ինձ զարմացած ասում են՝ բեր այդ գործիքները մեզ ցույց տուր:

-Այսքան տարի ապրելով Չեխիայում, ինչ-որ ընդհանուր բան տեսնո՞ւմ ես հայերի և չեխերի միջև:

-Չեխերը խուսափում են հայերի հետ քաղաքական, տնտեսական, առևտրային շփումներից: Նրանք հոգնել են իրենց երկրում տարբեր ազգերի խարդախություններից և կարծես մեկուսացած են: Երկրում գողությունների գրեթե 57 տոկոսը այլազգիների կողմից է կատարվում: Երբեմն նրանք անգամ արհամարհական կեցվածք են ընդունում: Բայց ես նրանց չեմ մեղադրում:

Ես Պրահայից 300 կմ հեռու եմ ապրում, և երբ իմ ցուցահանդեսներին եմ հրավիրում՝ մեծ սիրով են գալիս քաղաքապետարանից: Տարիների ընթացքում իմ ստեղծած կապերը, մեղմ ու հանգիստ բնավորությունս, նվիրվածությունս, կնոջս չեխ լինելու գործոնը, այս ամենը չեխերի մեջ տարիների ընթացքում վերաբերմունք են ձևավորել:

-Կարծում եմ Ձեզանով նրանք նաև հայ ժողովրդին են ճանաչում. դա շատ կարևոր է, որպեսզի նրանց մեջ ձևավորվի վերաբերմունք հայերի նկատմամբ: Դրսում ապրող յուրաքանչյուր հայ մարդ, և հատկապես մտավորականները, իրենց ներկայությամբ ու գործելաոճով պետք է ճիշտ կարծիք ձևավորեն մեր ազգի նկատմամբ, այնպե՞ս չէ:

-Չեխիայի ամենամեծ թերթում, որը կոչվում է «Դեննիկ», և եթե չեմ սխալվում՝ ունի 250-300 աշխատող, և տարածվում է ըստ շրջանների, պարբերաբար հրատարակվում են իմ հոդվածները Հայոց ցեղասպանության, Հայաստանի մասին: Դա ևս տպավորություն և կարծիք է ձևավորում մեր ժողովրդի, մեր տեսակի ու ավանդույթների մասին:

Ես զգում եմ այն անկեղծ ջերմությունը, որ իմ անձի հանդեպ տածում են քաղաքապետարանի և այլ պետական կառույցների ներկայացուցիչները, պետական տարբեր պաշտոնյաներ ու սովորական չեխ մարդիկ: Ինձ հրավիրում են տարբեր միջոցառումների:Դա ինձ դուր է գալիս, շոյում:

-Ուրախ եմ Ձեզ համար, պարոն Առաքելյան: Մանավանդ, որ Մանկավարժական համալսարանի գործընկերներին երբեք չեք մոռանում: Հայրենիքում գտնվելու ընթացքում համալսարանն այն առաջին վայրն է, ուր այցելում եք:

Դուք արժանի եք շատ մրցանակների: Բարի, անկաշառ նվիրումով ու համեստությամբ աչքի ընկնող մտավորականի Ձեր տեսակի համար մրցանակները թող շարունակական լինեն, մշտապես սիրված ու գնահատված լինեք ոչ միայն հայրենիքում, այլև այն երկրում, որը Ձեզ համար վաղուց դարձել է երկրորդ հայրենիք:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

«100 ՏԱՐԻ ԱՆՑ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐՈՎ»

Մարդասիրությունը մարդկության ճակատագրի բարելավման մտահոգությունն է

Ֆրիտյոֆ Նանսենը վաղուց դարձել է մարդկության սիրելին: Մոլորակի երախտապարտ ժողովուրդները մեծ բևեռախույզի հիշատակին նրա անունով աշխարհագրական տարածքներ են անվանակոչել: Սակայն, ինչպես գրում է Մկրտիչ Արզումանյանը, «փոքրաթիվ ժողովուրդներն ավելի կարիք ունեն մեծ բարեկամների: Հենց այդպիսին է Ֆրիտյոֆ Նանսենը հայ ժողովրդի համար: Նա միշտ հատուկ գորովանքով է հիշում առաջավոր մարդկության առաքյալին, որն աներևակայելի ջանքեր գործադրեց օգնելու աշխարհի առավել տառապած ժողովուրդներից մեկին: Քանի կան ու կլինեն հայեր, այնքան ժամանակ նրանք խոր ակնածանքով ու անհուն սիրով կհիշեն Նանսենի անունը»:

Նման հայ անհատներից էր գրող, գրականագետ Ֆելիքս Բախչինյանը, ում մեծագույն ջանքերով Նանսենն այսուհետ հայ ժողովրդի համար դարձել է սիրելի անուն, մարդասիրության չափանիշ:

Սեպտեմբերի 22-ին, Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված գրող, գրականագետ, թարգմանիչ, նանսենյան մարդասիրության մեծ քարոզիչ Ֆելիքս Բախչինյանի ծննդյան 75-ամյակին: Ափսոս, որ նա չհասցրեց իրականացնել «100 ՏԱՐԻ ԱՆՑ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐՈՎ» միջոցառումների այն մեծ ծրագիրը, որով նախատեսել էր՝ միջազգային գիտաժողով, հանդիպումներ, ցուցադրություններ:

Եվ ահա, Ֆելիքս Բախչինյանի 75-ամյակն են նշում՝ որպես հիշատակի տուրք նրա թողած մեծ ժառանգության՝ շուրջ 100 գիրք, ինչպես նաև որպես մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի գործի մեծ ջատագովի:

Միջոցառումն իրենց սրտացավ ու բարեկամական ուղերձներով իմաստավորեցին Ավ. Իսահակյանի անվան գրադարանի տնօրենի պաշտոնակատար Ռուզաննա Բարսեղյանը, գրող, բանաստեղծ, պետական և հասարակական գործիչ, ՀՀ զինված ուժերի և ոստիկանության գնդապետ Անդրանիկ Հակոբյանը, իրավաբան, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Գագիկ Ավետիսյանը, բանաստեղծ, բ.գ.թ. Թադևոս Տոնոյանը, բանաստեղծուհի Նաիրա Սիմոնյանը, թարգմանչուհի Կարմեն Ահարոնյանը, Ֆ. Բախչինյանի գրքերի, ստեղծագործությունների թարգմանիչ Աշոտ Լևոնյանը, «Ֆրիտյոֆ Նանսեն» թանգարանի տնօրեն Ժորա Հակոբյանը, «Ֆրիտյոֆ Նանսեն» ինստիտուտի գործադիր տնօրեն Հայարփի Խաչատրյանը: Հանդիսությունը վարում էր և մի առանձին հմայք էր հաղորդում նրան դերասանուհի Գայանե Սամվելյանը:

Ֆրիտյոֆ Նանսենի և իր հանձնախմբի Հայաստան այցելության 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքում յուրահատուկ էր «100 տարի անց Ֆրիտյոֆ Նանսենի ոտնահետքերով» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը ՀՀ նկարիչների միության դահլիճում:

Ֆելիքս Բախչինյանի ծննդյան օրը Արմեն Դարբինյանը գրառում էր արել սոցիալական հարթակում. «Այսօր ծննդյան օրն է երևութային, եզակի մի մարդու, որը բոլորիս անունից երախտագիտություն էր սփռում առ հռչակավոր նորվեգացի ՆԱՆՍԵՆ, առ հումանիզմ: Էլիտար Հայ էր Բախչինյանը՝ մշտապես պատրաստ ազգային բեռի իր հասանելիքը կրելու:

Իր հեղինակած մեդալով նա փորձում էր բարձրացնել մեզ մեր իսկ նշածողից ավելի բարձր, առավել լավը դարձնել մեզ»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

«ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ». ՆՈՐՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սովորական հայրենիք» գիրքը 44-օրյա պատերազմի մասնակից Նարեկ Վարդանյանի ստեղծագործությունն է: Հեղինակը Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող է:

Սեպտեմբերի 23-ին Մանկավարժականում կայացավ գրքի շնորհանդեսը:

Նարեկ Վարդանյանը գիրքը գրել է պատերազմի ընթացում, շարունակել պատերազմից ու իր վիրավորումից հետո: Նա գանգուղեղային ծանր վնասվածք է ստացել, եղել կոմայի մեջ:

«Սովորական հայրենիք»-ը Նարեկի հետ պատահածի, ընկերների ու պատերազմի մասնակից այլ անձանց մասին հուշեր են:

Հեղինակն իր տեսածն ու զգացածը երբեմն հորինված կերպարների միջոցով է ներկայացրել՝ ամբողջացնելով պատերազմի մասնակցի կերպարը: Գրքում կան նաև իրական հերոսներ՝ իրական անուններով:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը հաստատել է ծանոթանալ գրքի բովանդակությանը. ասում է՝ Նարեկի ապրածը, հիշողություններն ու հույզերը ռազմի դաշտից, հայրենիքի նկատմամբ մտահոգությունները, քննադատությունները, սովորական մարդկանց, ճակատագրերի ու վախերի, հերոսությունների մասին, ընթերցվում են մի շնչով:

Նկատում է՝ հուշագրական ժանրի այս գիրքը հնարավորություն է տալիս պատերազմը ոչ միայն լսել, տեսնել, հասկանալ, այլ այն զգալ միջից՝ ինչպես որ կա: Կարծում է, որ արժեքավոր այս գիրքը հետագայում կարող է ծառայել որպես նորօրյա պատերազմի վավերագրություն, ինքնատիպ վերլուծություն, որը հնարավորություն կտա մտորել, արժևորել, խնդիրները հետահայաց հասկանալ և սովորել՝ ինչպես կարելի է սովորական հայրենիքը մի փոքր անսովոր սիրել. «Այս գիրքը պատգամ է, քարոզ, փորձ՝ ապրածով եղած շտկելու և մեր վերաբերմունքը հայրենիքի և միմյանց նկատմամբ փոխելու»,-նշեց Էդգար Հովհաննիսյանն ու շնորհակալություն հայտնեց հեղինակին՝ անցած ճանապարհի և հետագա պլանների համար. ապագա պատմաբանը որոշել է մասնագիտանալ պատմության մեթոդիկայում՝ նաև հասկանալու դասավանդման հիմնախնդիրները:

Նա կարծում է, որ հասարակությունը պետք է գնահատի իր կողքին ապրող հերոսներին. հասարակ մարդկանց՝ հերոսական անցյալով, որոնք անցել են տարբերվող ուղի: Ապագա պատմաբաններն, անկախ արժեքների փոփոխությունից, նաև այս գաղափարախոսությամբ պետք է սնեն գալիք սերունդներին. դա է թելադրում մասնագիտությունը:

Նարեկ Վարդանյանը խոստովանում է՝ «Սովորական հայրենիք» գրքի կենտրոնում զոհված տղաներն են, ոչ թե ինքը: Հեղինակն այն գրել է մարտական ընկերների՝ Ռոբերտի, Նվերի և Դավթի նահատակվելուց հետո: Ասում է՝ եթե չգրեր, գուցե մոռացության մատնվեին նրանց մասին հուշերը:

2020 թվականը համարում է ոչ թե պարտության, այլ պայքարի պատմություն. զոհված մարտընկերներն իրենց կյանքով և ապրածով այդ ապացուցեցին. «Զինվորը մարտի դաշտում պայքարում է մինչև վերջ և զոհվում. դրանից հետո՝ ինչ կորոշվի, ինչ կստորագրվի, այդքան էլ կարևոր չէ»,-նշեց Նարեկ Վարդանյանն ու կարևորեց պայքարի շարունակականությունը, ինչի փորձ է նաև իր հեղինակած գիրքը. «Մեզնից յուրաքանչյուրն իր տեղում պետք է հայրենանվեր գործ անի, պահպանի իր ինքնությունը: Այս գիրքը բոլորիս մասին է. նրանց, ովքեր մասնակցել են, վիրավորվել, զոհվել: Սա մեր պատմությունն է ու ներկան, մեր ապագա սերնդի դաստիարակության համար մի փոքրիկ կաթիլ, որը գուցե նպաստի առավել հայրենասեր և քաղաքացիակենտրոն դառնալուն»:

«Նարեկը Հայաստանն է, որ ուզում է վերակագնվել և չի կոտրվում. նա ծանր վիրավորումից և երկարատև բացակայությունից հետո, այս տարի է վերականգնել ուսումը Մանկավարժականում»,-ասում է Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանն ու հպարտությամբ հավելում՝ նա ապրում է պատմության դասերով և գուցե այդ կերպ է շարունակում իր պայքարը՝ մարտի այլ դաշտում, որ ոտքի կանգնեցնի մեր երկիրը:

Պատմաբանի կարծիքով՝ Նարեկի պայքարը, անկոտրում ոգին, հասարակության մեջ իր տեղն ունենալու մղումը պետք է ոգևորի բոլորին, որ ապրենք՝ հանուն անցած ճանապարհի:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄԱԼՅԱՆ

Սեպտեմբերի 30-ին Հենրիկ Մալյանը կդառնար 100 տարեկան

ԼՈՒՍԱՅԻՆ ԿԻՆՈՅԻ ԼԿՈՒՆՔՆԵՐԻՑ

Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում նրա ստեղծագործական կենսագրության մասին, Մալյանն իրեն հատուկ թեթև ակնարկով հասկացնում էր, որ լավ կլինի, եթե այն սկսվի «Եռանկյունի»ֆիլմից: Այդ ակնարկով նա ոչ թե թերագնահատում էր իր նախորդ՝ «Ճանապարհ դեպի կրկես» (1963) (համահեղինակ Լևոն Իսահական), «Մայր Ժակը և ուրիշները» (1964 թ), ալմանախի կարճամետրաժը կամ, ասենք, «Նվագախմբի տղաները» (1960 թ.) (համահեղինակ Հենրիկ Մարգարյան) ֆիլմերը: Բոլորովին էլ ոչ: Պարզապես «Եռանկյունին» ինքնուրույն ստեղծագործական այն սկիզբն էր, որտեղ համագործակցությունից զատ Մալյան կինոբեմադրիչը լիարժեք ներդրել էր իր ասելիքը:

«Եռանկյունին» շրջադարձային էր և՛ Մալյան ռեժիսորի, և՛ ամբողջ հայկական կինոյի համար:

Այնուհետև նա Հրանտ Մաթևոսյանի սցենարով նկարահանեց «Մենք ենք, մեր սարերը», որն այսօր՝ ավելի քան 50 տարի անց, համարվում է հայկինոյի դասական ֆիլմերից մեկը:

Իր կինոերկերով՝ «Եռանկյունի» (1967 թ.), «Մենք ենք մեր սարերը» (1969 թ.), «Հայրիկ» (1972 թ.), «Նահապետ» (1977 թ.), «Կտոր մը երկինք» (1981 թ.), Հենրիկ Մալյանը խոսեց գեղեցիկի լեզվով, ազգի, երկրի հզորության, միասնության և հարատևության լեզվով: Եվ այդ խոսելածևը, նույնիսկ առանց հայերենի իմացության, հասկանալի դարձավ բազում ազգերի:

Այսօր արդեն առանց վարանելու կարելի է փաստել, որ հայ կինոյի հիմնադիր Համո Բեկնազարյանից հետո Հենրիկ Մալյանը մեր ազգային մեծագույն կինոբեմադրիչն է, որն իր ֆիլմերով ազգային արժեքները համեմեց համամարդկայինով: Շարունակելով բեկնազարյանական կինոյի ազգային ավանդույթները, նա պեղեց «երկրաբանական» իր շերտը, որն անշուշտ ազգայինի և համամարդկայինի կուռ միասնություն է:

Մալյանի հերոսները գալիս են մեր ժողովրդի ակունքներից, անցնում Մալյան կինոբեմադրիչի միջով և դառնում իրենն ու մերը:

Մալյանն իր իսկ ֆիլմերի հերոսներն է. «Եռանկյունու» Մկրտիչները, «Մենք ենք, մեր սարերի» Հովիվները, «Հայրիկի» Պապը, «Նահապետի» Նահապետը, գուցե և իր չնկարահանած «Կոմիտասի» Կոմիտասը: Դերակատարներն են տարբեր, հերոսների խառնվածքն ու տեսակը, ապրումներն ու հույզերը Մալյանինն են:

Կյանքից դեպի Մալյան, նրա սրտի բաբախումով էկրան և նորից կյանք: Ահա այն «կարճ» և շիտակ ճանապարհը, որ անցնում են նրա հերոսները: Եթե իրար մոտ հավաքենք Մալյանի նկարահանած ֆիլմերի բոլոր հերոսներին, ապա կստացվի հայկական մի փոքրիկ գերդաստան, ուր մթնոլորտը շաղախված է անկոտրուն կամքով, ապրելու, հարատևելու ուժով:

Իսկ ո՞րն է ազգային կինոն Մալյանի պատկերացմամբ:

- Ես համոզված եմ, որ կինոյում ազգային հարցն այդքան չէր շոշափվի, եթե մեր ֆիլմերը լինեին արվեստագետի հոգու խորքից բխած տրամադրությունների արտահայտություն: Համոզված եմ նաև, որ այն անհատը, որն անցել է նախապատրաստական շրջան, որն իսկապես գիտե, զգում է իր կողքի մարդուն, շնչել է Մատենադարանի խորհրդավոր և Հրազդան մարզադաշտի բոլորովին էլ ոչ խորհրդավոր օդը, զայրույթով լռել է Եղեռնի հուշարձանի առջև և հպարտացել Հանրապետության հրապարակով, որ զգացել է մեր եկեղեցիների վեհությունը և զմայլվել հայ աղջիկների հեզաճկուն պարով, որը հաղորդվել է Նարեկացուն, ում սիրտը բաբախել է Չարենցի սրտի և մեր այսօրվա միլիոնավոր սրտերի ռիթմով, չի կարող ազգային ֆիլմ չստեղծել: Ինձ թվում է, բոլոր դեպքերում ֆիլմն ազգային է դառնում լոկ այն ժամանակ, երբ արվեստագետի շունչը, կիրքը սերտորեն կապվում է ազգի շնչին ու կյանքին: Ազգային ֆիլմերը մարդու շնչառության նման մի բան է, նրա լեզվին նմանվող բան:

Մալյանի այս խոսքերը կարելի է նաև չտրոհել… Ամեն ինչ ասված է հստակ ու պարզ… Սակայն Մալյան կինոբեմադրիչի ուժն ու հմայքը ինքն իրեն հավատարիմ մնալու, նյութին, ասելիքին, սկզբունքներին չդավաճանելու մեջ է:

Հավանաբար այդ հավատամքից էր գալիս նաև այն, որ նա հրաժարվեց «Կոմիտաս» երկսերիանոց ֆիլմի նկարահանումներից: Բանն այն է, որ Կոմիտասի երկու դերակատարներին (մանուկ հասակի և տարիքով) նա արդեն ընտրել էր, իսկ երիտասարդ Կոմիտասը, որը ֆիլմի սյուժետային հիմնական գիծն ու ատաղձն էր կազմելու, չկար ու չկար: Մալյանին ոչ թե կերպարի արտաքին փայլն էր հետաքրքրում, այլ կոմիտասյան ներքինով շաղախված դերակատարի նեռաշխարհը: Կինոնկարի առաջին կադրերը նույնիսկ նկարահանել էր, երբ նա իր մեջ ուժ գտավ (արհամարհելով նույնիսկ առողջականը), հրաժարվեց հետագա նկարահանումներից:

Այս առիթով, իրենից անբաժան թղթապանակը թևի տակ, մի օր ներս մտավ «Ֆիլմ» թերթի խմբագրություն և մի փոքրիկ թուղթ մեկնեց, որի վրա գրված էր.

- Ավելի լավ է ինձ ասեն՝ ինչո՞ւ չնկարահանեցիր «Կոմիտասը», քան թե հարցնեն՝ ինչո՞ւ նկարահանեցիր «Կոմիտասը»:

Ես չգիտեմ, կգտնվի՞ մեկը, որին տրամադրեն անսահման հնարավորություններ, ֆինանսներ, խորհրդային շրջանում եվրոպաներում նկարահանումների հնարավորություններ, իսկ ինքն առաջնորդվի այն իդեալով, որ «Կոմիտաս» ֆիլմը կամ պիտի իր մեծությանն արժանի լինի, կամ էլ չպիտի նկարահանվի…

Հենրիկ Մալյանն ընտրեց երկրորդ տարբերակը, որի համար ես շատ, շատ եմ ափսոսում…

Ծնունդդ շնորհավոր:

Ռոբերտ ՄԱԹՈՍՅԱՆ
«Ֆիլմ», «Գեղարվեստ» թերթերի և «+Կինո» ամսագրի հիմնադիր խմբագիր

Բակալավրիատից մագիստրատուրա՝ իմ ուսանողական ճանապարհը

Երբ մտահոգված էի՝ մտածելով, թե ո՞ր համալսարան եմ ընդունվելու, ոչինչ չէր երևում միանշանակ: Բայց բարեհաջող բոլոր քննություններից հետո ես ընդունվեցի Հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բաժին՝ անվճար համակարգով: Այդ պահից սկսվեց իմ յուրահատուկ ճանապարհը համալսարանական կյանքում:

Առաջին քայլերից սկսած՝ միացա ուսանողական խորհրդին, որը տվեց ինձ նոր հնարավորություններ՝ մասնակցել հետաքրքիր սեմինարների, կազմակերպել հանդիպումներ արվեստի և կրթության ոլորտի մասնագետների հետ, ներգրավվել ուսանողական նախաձեռնությունների մեջ: Կրտսեր կուրսերում փորձառություն ձեռք բերելով՝ մասնակցեցի ինչպես մեր համալսարանի, այնպես էլ այլ կազմակերպությունների միջազգային գիտաժողովների, որոնք ինձ սովորեցրին աշխատել գիտական թեմաների շուրջ և զարգացնել սեփական հետազոտական հմտությունները:

Բակալավրիատում սովորելիս ես ուսումնաճանաչողական այցով մեկնեցի Մոսկվա: Այս տարիներին բախտ վիճակվեց նաև տարբեր կրթական հարթակներում խոսել մանկավարժի գործունեության կարևորության մասին: Մասնակցեցի «MISS STUDENT» մրցույթին, Աղավնաձորի ամառային դպրոցի ծրագրին, որին մասնակցում էին նաև արտերկրի ուսանողներ: Այդ նախագծերում ձեռք բերած ընկերական և մասնագիտական կապերը դարձան արժեքավոր՝ կարևորելով ուսանողական կյանքն իր բազմազանությամբ:

Հետագայում ստացա առաջարկ՝ լինել ուսանողական խորհրդի փոխնախագահ, որի աշխատանքից մինչ այսօր մեծ բավականություն եմ ստանում: Այս գործունեության կողքին ինձ հաջողվում է առցանց դասավանդել հայերեն՝ արտասահմանում բնակվող իմ փոքրիկ աշակերտներին, և համատեղել գիտական, սոցիալական ու կրթական գործունեությունը:

Բակալավրիատում կրթությունս անցավ ակնթարթի պես՝ լի հագեցած ու հիշարժան փորձերով, և անչափ ուրախացրեց այն պահը, երբ համալսարանի ռեկտորը շնորհեց ինձ կարմիր դիպլոմ, իսկ ընտանիքս այդ պահը վայելում էր դահլիճից:

Սովորելով մագիստրատուրայում, հիմա ես առավել քան պետք է պայքարեմ մոտիվացիոն անկումների դեմ, զարգացնեմ իմ մեջ կարգապահություն և սովորեմ սովորելու կանոնները՝ հատկապես այս տեխնոլոգիական դարաշրջանում. գիտեմ՝ կանգ առնելն անընդունելի է: Այսպիսով՝ շարունակելու եմ գրել գիտական հոդվածներ, ներգրավվել ակտիվ հասարակական գործունեության մեջ և ստեղծագործել:

Մանկավարժական համալսարանը տալիս է անհավանական հնարավորություններ, ուստի ուսանողներին խորհուրդ կտայի բաց չթողնել ուսանողական կյանքին մասնակցելու և սեփական հետաքրքրությունները զարգացնելու յուրաքանչյուր առիթ:

Ակնկալում եմ, որ այս ճանապարհը դեռ շատ հետաքրքիր օրեր ու նոր փորձառություններ է բերելու, և ուրախությամբ կներկայացնեմ այդ մասին հաջորդ գրառումներում:

Կարինե ԱՎԱԼՅԱՆ
Մագիստրատուրա 1-ին կուրս

Մեկ սիրտ, երկու անուն

Ես Շողակաթն եմ, քույրս՝ Հռիփսիմեն: Մենք ծնվել ենք նույն օրը՝ մի քանի վայրկյանի տարբերությամբ՝ 2006 թվականի օգոստոսի 3-ին:

Մեզ երբեք չեն հարցրել, թե ուզում ենք լինել զույգ քույրեր. կյանքը մեզ իր նախընտրությամբ ու գրկաբաց սիրով տվեց իր ամենամեծ պարգևը:

Տարիները գլորվեցին, մենք մեծացանք՝ կողք կողքի, ձեռք ձեռքի տված: Ու այն ամենը, ինչ անում էինք, կարծես երկուսով մեկի փոխարեն էր: Մեր երազանքն էր մուտք գործել մանկավարժական աշխարհ, սեր տալ, սովորել և սովորեցնել:

Երբ հասավ ժամն այդ, միասին դիմեցինք Մանկավարժական համալսարան: Բայց ճակատագիրն ու քննությունները միշտ չէ, որ մեր սրտով են լինում: Ես ընդունվեցի, բայց Հռիփսիմեն չհաղթահարեց քննությունը: Ես կարող էի շարունակել, բայց չէի ուզում իմ քույրիկին մենակ թողնել: Ինչո՞ւ առաջ շարժվել, երբ սիրտդ կիսատ է: Ես դուրս եկա համալսարանից: Որոշումս միանգամից էի կայացրել, հասարակության արձագանքը ծանր էր: Շատերն ասում էին. «Ինչո՞ւ ես թողնում քո ապագան», «Դու իրավունք չունես այդպես վարվելու, ինչո՞ւ ես քեզ զոհում հանուն քրոջդ», «Ինչպե՞ս կարելի է այսքան անմիտ քայլ անել»...

Նրանց աչքերում ես դարձա մեկը, որը փչացրեց իր հնարավորությունները հանուն ուրիշի: Բայց այդ «ուրիշը» իմ կեսն էր, իմ քույրը: Ես տուն դարձա. ամիսները գլորվեցին: Ես ոչ թե պարտվեցի, այլ հաղթեցի՝ մնալով քրոջս կողքին: Մեկ տարի ևս պարապեցինք:

Այս տարի մենք նորից դիմեցինք: Նոր հույսով և նոր ուժով: Ու վերագտանք մեր ճանապարհը դեպի Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, այս անգամ՝ արդեն հաղթանակած: Միասին սկսեցինք նոր ուղի՝ ուսանողական կյանք, որի մասին երազում էինք դեռ մանկուց: Այժմ մենք մեզ շատ լավ ենք զգում: Ունենք հրաշալի դասախոսներ:

Մարդիկ ասում են՝ զույգ լինելը նույն հագուստը կրելը չէ: Դա նույն սիրտ կրելն է: Երբ մեկը ցավ է զգում, մյուսն ակամա լռում է: Երբ մեկը թևաթափ է լինում, մյուսը դառնում է թև: Ես ու Հռիփսիմեն հենց այդպես ենք ապրում՝ մեկ հոգով, բայց երկու անունով:

Մեր կյանքի պատմությունը դեռ նոր է սկսվում: Բայց ես գիտեմ՝ ինչ էլ լինի, մեր ընտրած ուղին՝ կրթել, սեր տալ, սովորել ու սովորեցնել, անպայման կդառնա մեր կյանքի ամենավառ էջերից: Քանզի այն ճանապարհը, որն անցնում ես քրոջդ ձեռքը բռնած, երբեք փշոտ չի լինում:

Շողակաթ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 1-ին կուրս

Լրացավ 44-օրյա պատերազմի 5-րդ տարելիցը: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան ժամը 7:10-ին, ստացվեցին առաջին լուրերը, որ Ադրբեջանը սկսել է օդային և հրթիռային հարձակում Արցախի ուղղությամբ: Նույն օրը Հայաստանում և Արցախում հայտարարվեց ռազմական դրություն և զորահավաք: Ադրբեջանը, Թուրքիայի անմիջական օժանդակությամբ, լայնածավալ պատերազմ էր սկսել:
Ներկայացնում ենք ՀՊՄՀ Լրագրության բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի Մարի Մաթևոսյանի ակնարկ-խոհը՝ մեր ժողովրդի ամենաողբերգական էջերից մեկի մասին:

Պատերազմը երբե՛ք չի ավարտվում



Պատերազմի ժամանակագրության մեջ միայն սկիզբն է հստակ: Պատերազմը երբե՛ք չի ավարտվում:

Մեր երկրում պատերազմ սկսվեց. մի անավարտ ու անդադար շարունակվող պատերազմ, որի ընթացքում մենք կորցրինք ամենաթանկը և մինչ օրս շարունակում ենք կորցնել…

Պատերազմի մասին հիշողություններն իմ ողջ գիտակից կյանքի ամենացավոտ ու սարսափազդու դրվագներն են:

Պատերազմի հենց առաջին օրը հայրիկս դիրքեր գնաց, ու թեև ես սարսափում էի գիտակցել հնարավոր հետևանքները, բայց ոչ մի պահ չէի մտածում, որ նա (կամ որևէ մեկը) չպիտի գնար: Ես ծնվել ու մեծացել եմ Սյունիքում, միշտ եմ գիտակցել ծննդավայրիս կարևորությունը, դաստիարակվել եմ հայրենասեր ընտանիքում՝ ճիշտ արժեքներով: Շատ լավ գիտեի, որ հողի համար, հայրենիքի համար, երազանքի համար կռվել ու պայքարել է պետք:

Սեպտեմբերի 27-ին սկսվեց չդադարող մղձավանջը. աշխարհը մի պահ կանգ առավ, հետո սկսեց փլվել…

Այդ 44 օրերն անցան անհասկանալի. չեմ կարող ասել՝ արագ, թե դանդաղ, որովհետև այդ օրերին ժամանակի զգացողությունն էլ էինք կորցրել. չէինք ապրում, այլ միայն քարշ էինք տալիս մեր գոյությունը (այդպես անում ենք մինչ օրս):

44 օր շարունակ ոչինչ չէի գիտակցում ու չէի պատկերացնում՝ ինչ էր կատարվում (գուցե իրականությունից կտրված էի և իրականություն էի վերադառնում միայն օրվա մեջ մի քանի րոպեով, որ կարդայի զոհվածների անունները, որ քանդվեի, որ գիտակցեի՝ ինչքան թանկ գին է վճարվում իմ ապրելու ու լինելու համար, իմ ու ինձ պես շատերի հայ մնալու համար…):

44 օր մենք փորձում էինք լավատես լինել կամ գոնե ձևանալ, փորձում էինք հավատալ, որ ամեն բան լավ է կամ լավ է լինելու, փորձում էինք չկորցնել կապը մեր պատմության հետ և հավատալ, որ «հաղթելու ենք»:

Նոյեմբերի 10-ին թվում էր՝ ամեն բան ավարտվեց, բայց ամեն ինչ սկսվեց հենց այդ օրվանից…

Քաոս սկսվեց մեր երկրում, ու ցավոք՝ դա կառավարվող քաոս էր: Ես տեսա երբեմնի ամենահզոր ժողովրդին պարտված, ընկճված, հուսահատ… Մի ժողովրդի, որը դեռ երեկ պատրաստ էր վերջին ճիգով անգամ պահելու իր հողը: Մի ժողովրդի, որ հավաքական բռունցք դարձավ ու «ազգ-բանակ» սկզբունքով սկսեց պաշտպանել իր հայրենիքը, բայց մի ստորագրությամբ մասնատվեց, սկսեց ատել ինքն իրեն ու իր պետությունը և թշնամիներ փնտրել հենց իր տանը…

Մենք զրկվեցինք նախնյաց փառքից, մենք հեռացանք մեր արմատներից ու կորցրինք մեր արժանապատվությունը: Մենք հրաժարվեցինք մեր ինքնությունից, պատմությունից, սրբությունից: Ներքին թշնամին հաղթեց մեզ ավելի, քան արտաքինը երբևէ կարող էր…

Օրեր անց, երբ հայրիկս վերադարձավ տուն, ես տեսա իմ ճանաչած ամենահայրենասեր մարդուն՝ հիասթափված ու հուսալքված, և պատերազմն իմ մեջ երբե՛ք չավարտվեց…

Պատերազմն իմ տան դուռը չբացեց, բայց շատ դռներ փակեց իմ մեջ՝ հավետ: Պատերազմն իմ կողքով չանցավ՝ անցավ իմ միջով և իմ մեջ այդպես էլ չավարտվեց:

Ես մեծացա. մի քանի ժամում մեծացա, սկսեցի գիտակցել բաներ, որոնք այդ տարիքում երևի պետք էլ չէր գիտակցել: Պատերազմի պայմանական «ավարտից» հետո միայն սկսեցի հասկանալ, թե ինչ է կատարվել:

Հինգ տարի է անցել, բայց ես դեռ Եռաբլուր չեմ գնացել… Մի՛ ներեք ինձ, Տղե՜րք, որ ՁԵԶ այցի գալու ուժ չունեմ, մի՛ ներեք նրանց, ովքեր ՁԵՐ հիշատակը վառ պահել չկարողացան, և խնդրում եմ՝ մի՛ ներեք մեզ, որ ՁԵՐ արյան գնով պահած հողն այսօր պաշտպանված չէ:

Պատերազմը դառնահամ ունի՝ կորցրած մանկության, կիսատ մնացած հույզերի ու անկարողության… Մարդկանց կորստի ու անհայրենիք մնալու դառնահամ:

Այս պատերազմին մենք տվեցինք ամենաթանկը, որ ունեինք՝ մեր լո՜ւյս Տղերքին, լույսից մաքուր Տղերքին ու փոխարենը ոչինչ չստացանք:

Եթե 1994 թ.-ի պատերազմով ձեռք բերեցինք Արցախի փաստացի անկախությունը, իսկ 2016 թ.-ին(ապրիլյան քառօրյա պատերազմ) ունեինք մի մխիթարանք՝ «Բարձունքը մերն է, Տղերքը չկան», ապա 2020 թ.-ին, այդ 44-օրյա աղետից հետո, ո՛չ բարձունքն էր մերը, ո՛չ էլ Տղերքը կային… իսկ 2023-ին տեղի ունեցավ սարսափելին... Ո՛չ Արցախը կա, ո՛չ Տղերքը և ո՛չ էլ Հայը…

Պատերազմից հետո ոչինչ նույնը չի մնում: Պատերազմից հետո ամենը փոխվում է, ամենքը փոխվում են: Դեռ «պատերազմից հետո»-ն չի եկել, և որպես հայ մեր ամենանվիրական երազանք-նպատակը պիտի լինի, որ այդ «հետո»-ն լինի Արցախի ազատագրումը, հայոց երկրի սահմանների հստակեցումը, մեր երկրի անսասան խաղաղությունը, Հայի տեսակի վերականգնումն ու արժեքների վերագտնումը…

Պատերազմի ժամանակագրության մեջ միայն սկիզբն է հստակ: Պատերազմը երբե՛ք չի ավարտվում:

Մարի ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Լրագրության բաժնի 2-րդ կուրս

Հայրենիքում, դարձյալ և կրկին...

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի հայկական «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի՝ Հայաստան ժամանած սաներն այս անգամ ևս բովանդակալից, ազգային արմատներին ու պատմությանը ևս մեկ քայլ մոտենալու կարևոր միջոցառումների մասնակցեցին: Այդ ամենին նպաստեցին Ազգային պատկերասրահ, տարբեր թանգարաններ, գրադարաններ ու խմբագրություններ այցելությունները:

Մամուլի տուն այցելությունը հետաքրքիր էր գրող, լրագրող, «Հայաստան» պարբերականի գլխավոր խմբագիր Տիգրան Նիկողոսյանի հետ ծանոթության, նրա գրական ստեղծագործական աշխարհին և գործունեությանը ծանոթանալու առումով: Օտար ափերում ապրող հայ երեխաների համար կարևոր դաս էր սա՝ «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս» հարցի շուրջ խորհելը, պատմական ակունքներին անդրադառնալը: Երեխաները երգեցին «Ղողանջ սեպտեմբերյան»՝ խմբագրի բառերով գրված երգը, որը հաճելի անակնկալ էր:

N11 գրադարանի տնօրեն Քրիստինա Թումաղյանի հրավերով դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանի և հայրենագիտության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանի ուղեկցությամբ այցելություն եղավ գրադարան, որտեղ աշխատակիցները սիրով ծանոթացրին գրադարանին, պահոցին, հարկաբաժիններին, ընթերցեցին հայ դասականների ստեղծագործություններից: Երեխաներն ասմունքեցին, երգեցին, իսկ Արինա Գրիգորյանը ներկայացրեց ազգային, նաև իր հեղինակած գեղեցիկ պարը: Ներկա էին ժամանակակից գրողներ՝ Տիգրան Նիկողոսյանը, Օլգա Դարյանը, Սաթենիկ Ղազարյանը, Հայկո Սուքիասյանը, որոնք ընթերցեցին իրենց ստեղծագործությունները:

Անչափ հետաքրքիր էր այցելությունը Ազգային պատկերասրահ. երեխաները վայելեցին ազգային արվեստի գոհարները: Տիկին Շողիկը հետաքրքիր փաստեր ներկայացրեց Հանրապետության հրապարակի կառուցման, «Յոթ աղբյուրի» առեղծվածային պատմության մասին, որի հեղինակն է Սպարտակ Կնտեղցյանը, երեխաները լսեցին նաև գլխավոր ժամացույցի մասին հետաքրքիր պատմություն:

Մեծն Սարյանի թոռնուհու՝ Ռուզան Սարյանի հետ հանդիպումը ևս անմոռանալի էր՝ հենց իր շուրթերից լսելու նկարչի մասին: Մարտիրոս Սարյանի մասին ավելին իմանալու և ազգայինից դեպի համամարդկայինը տանող գեղանկարչության հետ առնչվելու հնարավորություն էր այս այցելությունը, որ հագեցած էր և բովանդակալից:

Շողիկ Փահլևանյանը Դպրության օրվա առթիվ հանդիպում ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանի, Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան Մայրենի լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանի, ինչպես նաև «Մանկավարժական համալսարան» թերթի խմբագիր Սիլվա Ասրյանի հետ, ինչպես միշտ, սիրով ներկա գտնվեց Մանկավարժական համալսարանի N 57 և Եղիշե Չարենցի անվան N 67 դպրոցներում՝ մասնակցելով օրվա ոգուն համահունչ տպավորիչ միջոցառում- հանդիպմանը:

Մեծն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի հետ ջերմ բարեկամությունն ամրապնդվեց ևս մեկ այցով, Շողիկ Փահլևանյանը և տուն-թանգարանի տնօրենը՝ Արմենուհի Դեմիրճյանը խոսեցին կատարված հետաքրքիր աշխատանքների, տպագրված գրքերի մասին, որոնք նաև նվիրեցին հյուրերին: Հանդիպմանը ներկա էր լրագրող Մարիամ Միրզոյանը և բանաստեղծուհի Օլգա Դարյանը, որը գրադարանին նվիրեց իր գրքերը:

«Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցը ևս մեկ բեղուն ամառային ծրագիր իրականացրեց, որը հարստացրեց մասնակից երեխաների՝ հայրենիքի ճանաչողության գունեղ ներկապակը:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Համալսարանի ջոկատի հաղթանակը

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողները մասնակցեցին «Future Economy Summit» կազմակերպության կողմից իրականացված «YoCamp» 2025 ուսանողական-երիտասարդական ճամբարին:

Նրանք հանդես եկան «Կարմիրներ» ջոկատում՝ արտահայտելով միասնականություն և նախաձեռնողական ոգի:

Ճամբարային մրցույթ-խաղերում ՀՊՄՀ ուսանողները գրավեցին պատվավոր առաջին տեղը՝ ցուցաբերելով թիմային համախմբվածություն, բարձր գիտելիքներ և նախաձեռնողականություն:

Ուսանողները վերադարձան ոգևորված, լի նոր գաղափարներով, վառ տպավորություններով, նոր ծանոթություններով ու փորձով:

Շնորհավորում ենք մեր բուհի ուսանողներին և մաղթում ենք նոր ու շարունակական հաղթանակներ:

Մասնակցեցին «Առաջնորդների արհեստանոց» միջազգային դպրոցին

Սեպտեմբերի 21-25-ը Մանկավարժական համալսարանի 5 ուսանող մասնակցեց Արմավիրի պետական մանկավարժական համալսարանում (ՌԴ) անցկացվող «Առաջնորդների արհեստանոց» միջազգային դպրոց կրթական ծրագրին:

Այն համախմբել էր Հայաստանի, Ռուսաստանի, Աբխազիայի և Հարավային Օսիայի բուհերի ուսանողների. գերհագեցած ծրագրի շրջանակներում մասնակից թիմերի համար անցկացվեց թիմային աշխատանք և հրապարակային ելույթների դասընթացներ, վարպետության դասեր, ծանոթացում բուհին, այցելություններ տեսարժան վայրեր, նախագծային աշխատանքներ և այլն:

5-օրյա ծրագիրը հնարավորություն տվեց ծրագրի

38 մասնակիցներին ոչ միայն զարգացնել իրենց հմտությունները, այլև դառնալ կուռ միջազգային համայնքի մաս՝ հիմք դնելով ապագա համագործակցությունների և հետագա համատեղ նախաձեռնությունների:

Ծրագրի մասնակիցները կարևորեցին Արմավիրի պետական մանկավարժական համալսարանում կայացած առաջնորդության հմտությունների զարգացման վերաբերյալ կրթական սեմինարը, որն անցկացրեց ռեկտոր Եվգենի Նիժնիկը:

Նախագծերի կառավարման վերաբերյալ ինտերակտիվ սեմինարի նպատակն էր զարգացնել ժամանակակից ղեկավարման համար անհրաժեշտ հիմնական հմտությունները:

Ռեկտորն ուսանողներին ծանոթացրեց նախագծերի կառավարման տեսությանն ու պրակտիկային՝ գաղափարների ստեղծումից, նպատակների սահմանումից մինչև ռեսուրսների տրամադրում, իրականացում և արդյունքների վերջնական գնահատում: Հատուկ ուշադրություն դարձվեց թիմային կառավարմանը, ռիսկերի նվազագույնի հասցնելուն, թիմի ներսում հաղորդակցության հաստատմանը:

«Մեկ նախագծի շուրջ համագործակցությունն ու ակտիվ աշխատանքը հնարավորություն տվեցին ոչ միայն բարելավել մասնակիցների հմտությունները, այլև գործնականում ամրապնդել նոր ստացած գիտելիքները՝ իրական խնդիրների լուծման համար»,-նշեց ՀՊՄՀ «Մաթեմատիկա-ինֆորմատիկա» բաժնի ուսանող Վարուժան Ավագյանն ու հավելեց՝ կրթական ծրագիրը կնպաստի մասնակիցների մասնագիտական աճին և կարիերայի առաջխաղացմանը:

«Առաջնորդների արհեստանոց» միջազգային դպրոց կրթական ծրագրի հանդիսավոր փակմանը Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի (ՌԴ) ռեկտոր Եվգենի Նիժնիկը նշեց՝ առաջնորդները նրանք են, որոնք գիտեն, թե ինչպես ճիշտ կենտրոնացնել իրենց ներքին ուժն ու էներգիան՝ այն ուղղորդելով ճիշտ ուղղությամբ:

Ռեկտորը հույս հայտնեց, որ տարբեր երկրների ներկայացուցիչների միջև շփումը կշարունակվի. կիրականացվեն համատեղ նախագծեր, նախաձեռնություններ, կնախանշվեն զարգացման նոր ուղղություններ. «Թող կրթական այս ծրագիրը հզոր խթան դառնա ձեր անձնական աճին և միավորող թիմային ոգուն: Սահմանեք հավակնոտ նպատակներ, հասեք դրանց և շարժվեք առաջ»,-ասաց նա:

Ծրագիրն ավարտվեց վկայականների հանձնմամբ, տոնական համերգով, «Լինել միասին», բարեկամության ավանդական հրաժեշտի խարույկով:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ